«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2010 - 2012

Հոկտեմբեր, 2012թ.

- Երեւանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցի պատուհանների եւ գրադարանի վերանորոգման աշխատանքներ:
- Ժիրայր Աղավելյանի հեղինակած «Այսօր մի մաքուր հոգեկիր եմ ես» լուսանկարչական կոլաժների ցուցահանդեսը:

Սեպտեմբեր, 2012թ.

- «Անվճար դասագրքեր-2012/2013» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի եւ Բերձորի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների անապահով աշակերտներին 789 կտոր դասագրքի տրամադրում:
- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Հունիս, 2012թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի շրջանակում Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 60 աշակերտների 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Վահագնաձորի «Գուգարք» ճամբարում:

Ապրիլ, 2012թ.

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 3-րդ օլիմպիադա», Հայաստանի եւ Արցախի հինգ Թեքեյան դպրոցների 80 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն:

Փետրվար, 2012թ.

- Երեւանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցի գազիֆիկացման եւ ջեռուցման համակարգի ծրագրի իրականացում:

Հունվար - դեկտեմբեր 2012թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպություններին, այդ թվում ՀԹՄՄ:

Հոկտեմբեր, 2011թ.

- «Անվճար դասագրքեր-2011/2012» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբիի՝ Վ. Թեքեյանի անվ. դպրոցների անապահով աշակերտներին 995 դասագրքի տրամադրում:

Սեպտեմբեր, 2011թ.

- «Թեքեյանական մարզական խաղեր»՝ եռօրյա մրցութային ծրագրի իրականացում Վահագնաձորի «Գուգարք» ճամբարում՝ Հայաստանի եւ Արցախի վեց դպրոցների աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում:

Հուլիս, 2011թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի շրջանակում Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 85 աշակերտների 8-օրյա հանգստի կազմակերպում Վահագնաձորի «Գուգարք» ճամբարում:

Մայիս, 2011թ.

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ծրագրի շրջանակում այցելություն Էջմիածին, Զվարթնոց, Հ.Թումանյանի թանգարան եւ Հայաստանի ազգային պատկերասրահ: Ծրագրի շահառուներ՝ 75 աշակերտ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան չորս դպրոցներից:

Ապրիլ, 2011թ.

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական 2-րդ օլիմպիադա», Հայաստանի չորս Թեքեյան դպրոցների 80 աշակերտների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում, այցելություն Դելֆինարիում:

Հունվար - դեկտեմբեր 2011թ.

- Աջակցություն Հայաստանի Թեքեյան մշակութային միությանը:

Նոյեմբեր, 2010թ.

- Ֆինանսական օժանդակություն Ստեփանավանի Վ. Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցին՝ կանխելու ողջ ուսուցչական կազմի աշխատավարձի կտրուկ նվազեցումը:

Հոկտեմբեր, 2010թ.

- «Թեքեյանական մարզական խաղեր»՝ երկօրյա մրցութային ծրագիր Կարբի գյուղում չորս Թեքեյան դպրոցների մասնակցությամբ: Մրցանակների սահմանում:

- «Անվճար դասագրքեր-2010/2011» ծրագրի իրականացում Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցի անապահով աշակերտների համար:

Սեպտեմբեր, 2010թ.

- Ֆինանսական օժանդակություն Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնին՝ Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան բեմադրելու համար:

Հունիս, 2010թ.

- «Ամառային ճամբար» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ թեքեյանցի 41 աշակերտների 10-օրյա հանգստի կազմակերպում Եղեգնաձորի «Սիրանուշ» ճամբարում:

Մայիս, 2010թ.

- «Թանգարաններ եւ տեսարժան վայրեր» ծրագրի շրջանակում այցելություն Հ.Թումանյանի թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Բյուրականի աստղադիտարան, կենդանաբանական այգի: Ծրագրի շահառուներ՝ 75 աշակերտ

Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան չորս դպրոցներից:

- Ֆինանսական օժանդակություն «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնին:

Ապրիլ, 2010թ.

- Գիտելիքների մրցույթ մաթեմատիկա, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից՝ «Թեքեյանական օլիմպիադա», Հայաստանի չորս Թեքեյան դպրոցների 112 աշակերտների մասնակցությամբ:

- Հայաստանում գործող Վ.Թեքեյանի անվան դպրոցների աշակերտների ձեռքի աշխատանքների, նկարչական ցուցահանդեսներ, ինչպես նաեւ երգի, պարի եւ աստունքի երեկո:

Հունվար - դեկտեմբեր 2010թ.

- Աջակցություն Հայաստանի Թեքեյան մշակութային միությանը: